ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N204
« 18» ------12------- 2020թ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆԻՆ

Ներկայացվում է Կարճաղբյուր համայնքի 2020թ-ի դեկտեմբերի 14-ի համայնքի ավագանու թիվ 21. 22, 23, 24, 25, որոշումները:
Առդիր՝ 12 թերթ:

Կարճաղբյուր համայնքի
ղեկավար՝ Տ.Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՆԻՍՏ ԹԻՎ 7

2020 թ դեկտեմբերի 14-ին կայացած Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ավագանու

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Տարոն Քոչարյանը:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ՝ Հ.Ասատրյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Մանուկյան, Ռ. Ռուբենյանը, Դ. Մկրտչյանը:

Նիստին հրավիրված էին համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Ղրիմյանը, համայնքի ղեկավարի օգնական Լ. Օհանյանը, համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներ՝ Ա.Քոչարյանը, Ա. Սիմոնյանը, Ա.Ավետիսյանը, Ա.Գասպարյանը:

Նիստի օրակարգը

1.2021թ. համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

2. 2021թ. համայնքի սեփականության հողերի վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3. 2021թ. համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և մանկապարտեզի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը, պաշտոնային միավորները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. 2021թ. համայնքի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

5. Զմեռ 2020-2021թթ. ներհամայնքային ճանապարհների մաքրման համար գնումների ծախսեր կատարելու մասին:

Համայնքի ավագանին հաստատեց նիստի օրակարգը:

Համայնքի ավագանու անդամներ 1. Հ.Ասատրյան

2. Ա. Ավետիսյան

3. Գ. Մանուկյան

4. Ռ.Ռուբենյան

5. Դ. Մկրտչյան

Համայնքի ղեկավար՝ Տ Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » դեկտեմբերի 2020 թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» 2016թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի 8- 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի ե ենթակետով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղական համայնքի տարածքում 2021թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

1) Հիմնական օբյեկտի համար

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 հազար ՀՀ դրամ,

բ. սույն կետի ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

բբ) 501-մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

բդ) 3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2) Ոչ հիմնական շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշմամբ 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսված է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար, սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

- որպես Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված բարձր լեռնային բնակավայր՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ընթացիկ տարվա համար՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

- որպես Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված բարձր լեռնային բնակավայր՝ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ընթացիկ տարվա համար՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,

5. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում, վաճառքի կազմակերպման դեպքում 1250 (մեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում, վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1250 (մեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,
6. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ, մեկ քառակուսի մետրի համար,
7. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 3000 հազար ՀՀ դրամ,
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 1000 հազար ՀՀ դրամ:
7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
8. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 10000 (տաս հազար) ՀՀ դրամ:
10. Սահմանված դրույքաչափերը, որպես բարձր լեռնային բնակավայր, կարող են հաշվարկվել 0.3 գործակցի կիրառմամբ:

Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի 2021թ.
տեղական վճարների դրույքաչափերը.

1.համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
4. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և նմանատիպ այլ աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու թույլտվության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
7. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

   ա.ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 դրամ,

   բ.առևտրի,հանրային սննդի և բնակչության այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

   գ.հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ,ինչպես նաև այլ գործողություն իրականացնող հասարակական շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ 20 դրամ,

   դ.արտադրական,արդյունաբերական շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ 10 դրամ,գրասենյակային նշանակության շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝5 դրամ,

ե.կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ 3 դրամ:

8. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.
9. ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ ջրօգտագործողների ընկերությունների կողմից հարևան համայնքներում հաստատված մեկ խորանարդ մետր ոռոգման ջրի վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.
10. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.
11. համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
12. համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.
13. համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից.

14. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար հազար դրամ փոխհատուցման վճար:

ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2019 թ-ի դեկտեմբերի 19-ի <<Համայնքի 2020 թ տեղական տուրքերի և վճարների մասին>> թիվ 29 որոշումը:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ		
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ		
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » դեկտեմբերի 2020 թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշում

Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 81-րդ հոդվածի 3-րդ կետի,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

որոշում է.

Հաստատել համայնքի սեփականության հողամասերի 2021 թ. վարձավճարների չափը 1հա-ի հաշվարկով՝

Ա. բնակավայրի հողեր – 4710 ՀՀ դրամ,
Բ. երրորդ կարգի անջրդի հողեր – 6030 ՀՀ դրամ,
Գ. Չորրորդ կարգի անջրդի հողեր – 3810 ՀՀ դրամ,
Դ. Հինգերրորդ կարգի անջրդի հողեր – 1605 ՀՀ դրամ,
Ե. խոտհարք – 3450 ՀՀ դրամ,
Զ. արոտ – 690 ՀՀ դրամ,
Է. արտադրական և այլ ոչ գյուղատնտեսական – 22200 ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է՝

Կողմ(5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ		
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ		
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » դեկտեմբերի 2021 թվականի N 23

2021Թ. ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 27-րդ կետերի, 28-րդ հոդվածի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով, համայնքի ավագանին՝

որոշում է.

1.Հաստատել 2021թ. համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 282000 դրամ, որը կազմում է ՀՀ ազգային ժողովի պադգամավորի պաշտոնային դրույքաչափի 43%:

2.Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի և «Կարճաղբյուր գյուղի թիվ 1 մանակապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Համայնքապետարան.

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 19

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքչափերը /ՀՀ դրամով/	Դրույքը հաշվարկված միավորի	Ընդամենը նախատեսված ըստ դրույքային միավորի,դրամ	Բարձր լեռնային 20%, դրամ	Ընդամենը ամսական աշխատավարձը,դրամ
1.	Համայնքի ղեկավար	1	282 000	1	282 000	8 000	290 000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	158 000	1	158 000	8 000	166 000
3.	Համայնքի ղեկավարի օգնական	1	158000	1	158000	8000	166000
4.	Աշխատակազմի քարտուղար	1	164 000	1	164 000	8 000	172 000
5.	-//- առաջատար մասնագետ	1	158 000	1	158 000	8 000	166 000
6.	-//- -//- մասնագետ	1	158.000	1	158 000	8 000	166 000
7.	-//- առաջին կարգի մասնագետ	1	127 000	1	127 000	8 000	135 000
8.	-//- -//- -//- մասնագետ	1	127 000	1	127 000	8 000	135 000
9.	-//- -//- -//- մասնագետ	1	127 000	1	127 000	8 000	135 000
10.	-//- երկրորդ -//- -//-	1	97 000	1	97 000	8 000	105 000

11.	Օառայողական ավտոմեքենայի վարորդ	1	127 000	1	127 000	8 000	135 000
12.	Համայնքապետարանի հավաքարար	1	158 000	0.3	48 000	2 400	50 400
13.	-//- բակապահ	1	158 000	0.3	48 000	2 400	50 400
14.	Ջրագծի հսկիչ-սպասարկող	1	127 000	1	127 000	8 000	135 000
15.	-//- բակապահ	1	158 000	0.3	48 000	2 400	50 400
16.	Մշակույթի տան բակապահ	1	158 000	0.3	48 000	2 400	50 400
17.	-//- հավաքարար	1	158 000	0.3	48 000	2 400	50 400
18.	Օպերատոր/գործավար/	1	158 000	0.5	79 000	4 000	83 000
19.	Համայնքի անասնաբույժ	1	94 000	1	94 000	8 000	102 000
Ընդամենը				15	2223000	120000	2343000

3.Հաստատել «Կարճաղբյուր գյուղի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 14

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Պաշտոնների անվանումը	Հաստիքայի ն միավորը	Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/	Դրույքը հաշվարկվա ծ միավորի	Ընդամենը նախատեսվարծ ը ըստ դրույքային միավորի դրամ	Բարձր լեռնային 20 % դրամ	Ընդամենը ամսական աշխատավարձդր ամ
1.	Տնօրեն	1	126500	1	126500	8000	134500
2.	Հաշվապահ	1	126500	0.5	63200	4000	67200
3	Դաստիարակ	1	101200	1	101200	8000	109200
4.	-//-	1	101200	1	101200	8000	109200
5.	-//-	1	101200	1	101200	8000	109200
6.	-//- օգնական	1	89600	1	89600	8000	97600
7.	-//- օգնական	1	92600	1	92600	8000	100600
8.	-//- օգնական	1	92600	1	92600	8000	100600
9.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	126500	0.5	63200	4000	67200
10.	Խոհարար	1	126500	0.6	75900	4800	80700
11.	-//- օգնական	1	126500	0.6	75900	4800	80700
12.	դռնապան	1	126500	0.6	75900	4800	80700
13.	Բուժ.քույր	1	126500	0.7	88500	5600	94100
14.	Բակապահ	1	92600	1	92600	8000	100600
Ընդամենը				11.5	1240100	92000	1332100

4.ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 19-ի թիվ 31, 2020 թ.մայիսի 26 -ի թիվ 13 որոշումները:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (5), Դեմ(0) , Ձեռնպահ (0),

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Տ. ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ
Կարճաղբուրի ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » 12 2020 թվականի №24

ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ 2002թ. մայիսի 7 – ի օրենքի 18 – րդ հոդվածի 5 – րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» 1997թ. հունիսի 24 – ի օրենքի 31 – րդ և 32 – րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել 2021թ. համայնքի բյուջի նախագիծը՝

ա) եկամուտների գծով 81286.6 հազար դրամ

բ) ծախսերի գծով՝ 81286.6 հազար դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3

5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը(պակասուրդը)՝ տարեսկզբի ազատ մնացորդ 8563.3 հազար դրամ հատված 4

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդը)՝ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները հատված 5

7. Սահմանել, որ՝

ա) ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. .Հայկ Ասատրայան
2. Ավթանդիլ Ավետիսյան
3. Գագիկ Մանուկյան
4. Ռուբեն Ռուբենյան
5. Դերենիկ Մկրտչյան

Կողմ՝ 5

Դեմ 0

Ձեռնպահ՝ 0

ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ համայնքի ղեկավար՝ Տ. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » դեկտեմբերի 2020 թվականի N25

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020-2021ԹԹ. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և համայնքի բյուջեի 4251 հոդվածից – ճանապարհների պահպանում և շահագործում հոդվածից կատարել 300 000 (երեք հարյուր) հազար ՀՀ դրամի ծախսեր ու կնքել պայմանագիր:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ		
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ		
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ՝